ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՆՀԲՄԱՇՁԲ-20/5-Հ1

20.08.2020Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ N ՀՀԿԳՄՆՀԲՄԱՇՁԲ-20/5 ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«07» «09» 2020 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Գ.Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020թ օգոստոսի 20-ին կնքված N ՀՀԿԳՄՆՀԲՄԱՇՁԲ-20/5 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանել ս/թ դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:

1.2 Հաստատել պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման նոր օրացուցային գրաֆիկը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.3 Հաստատել պայմանաագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011031045
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բաղրամյանշին» ԲԲԸ
Հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Լեռնագոգ
էլ. փոստ՝ bshin@mail.ru
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115004673956
ՀՎՀՀ 04600132

Գործադիր տնօրեն՝

---------- Գ.Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1

« 07 » « 09 » 2020 թ. կնքված

N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5-Հ1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 1. Ջերմաստիճանի կարգավորման համակարգի տեղադրման աշխատանքներ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
	Բաժին-1		
	Ներքին ցանց		
1	Ներքին ցանց	համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	ս/թ դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	Բաժին-2		
	Կաթսայատուն		
1	Կաթսայատուն	համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	ս/թ դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	Բաժին-3		
	Օդափոխության համակարգ		
1	Օդափոխության համակարգ	համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	ս/թ դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	Ընդամենը 2020 թ. կատարվող աշխատանքներ	համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	ս/թ դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ **Վ. Գասպարյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ **Գ.Վարդանյան**

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2

« 07 » « 09 » 2020 թ. կնքված

N ՀՀԿԳՄՍՆՀԲՄՍՇՁԲ-20/5-Հ1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ ըստ ամիսների, ընդ որում.				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45331123/501	*ջերմաստիճանի կարգավորման համակարգի տեղադրման աշխատանքներ («Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի ջերմաստիճանի կարգավորման համակարգի տեղադրման աշխատանքներ)*	327072600	327072600	327072600	327072600	327072600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ **Վ. Գասպարյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ **Գ.Վարդանյան**

(ստորագրություն)

Կ.Տ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 5610-02

«03» 09 2020

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **ԲԱՂՐԱՄՅԱՆՇԻՆ ԲԲԸ** (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N **ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5** պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **Հայբիզնեսբանկ ՓԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **32,707,260 /երեսուներկու միլիոն յոթ հարյուր յոթ հազար երկու հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N **ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ՝ առավելագույնը **01.02.2021թ.:**

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

N 5611-02
«03» 09 2020

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **ԲԱՂՐԱՄՅԱՆՇԻՆ ԲԲԸ** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N **ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **Հայբիզնեսբանկ ՓԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **327,072,600 /երեք հարյուր քսանյոթ միլիոն յոթանասուներկու հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N **ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5** ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ՝ առավելագույնը **01.02.2021թ.:**

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/5** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ **Ա. Սարգսյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Ն. Սարգսյան**